Հաստատում եմ՝ դպրոցի տնօրեն Կ. Ալմասյան

31.08.2022թ.

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ

# Պ. ՊՌՈՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

## 2022-2023 ուստարվա

# ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Տնօրենի տեղակալ՝ Ա. Զոհրաբյան

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորում:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Օգտվել ժողովրդավարական հարաբերություններից, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները կառուցել գործընթացային հիմքի վրա, բարելավել դասի դաստիարակչական կողմը:
2. Ձևավորել աշակերտների ինքնաճանաչողության, ինքնակառավարման, ինքնուրույն գործելու, վերլուծական մտածողության, անսովոր պայմաններում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ և պատասխանատու վարք:
3. Սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, հայրենասիրության, հումանիզմի, հանդուրժողականության հիմքի վրա նպաստել երեխաների արժեքային համակարգի կազմավորմանը:
4. Պայմաններ ստեղծել երեխաների ճանաչողական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող կառույցների (արտադասարանական աշխատանք, արտադպրոցական հաստատություններ) գործունեության համար:

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դասղեկների հետ տարվող աշխատանք:
2. Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումների պլանավորում և կազմակերպում:
3. Արտադասարանական խմբակների աշխատանքների կազմակերպում և վերահսկում:
4. Դպրոցի կարգապահական, դաստիարակչական, ընդհանուր աշխատանքների կազմակերպում և վերահսկում:
5. Աշխատանքներ երեխաների տարբեր խմբերի հետ (սոցիալապես անապահով, ծնողազուրկ, վարքի շեղում ունեցող, շնորհալի երեխաներ ):
6. Աշխատանք ծնողական խորհրդի և ծնողական համայնքի հետ:
7. Աշխատանք սովորողների համակողմանի զարգացման ուղղությամբ.
   ա. Հայրենագիտական և հայեցի դաստիարակություն:
   բ. Հոգևոր,գեղագիտական, բարոյական, էկոլոգիական, իրավական, քաղաքացիական դաստիարակություն:

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

- Հայեցի դաստիարակություն
- Հոգևոր դաստիարակություն
- Գեղագիտական դաստիարակություն
- Ռազմահայրենասիրական դաստիարակություն
- Ֆիզիկական դաստիարակություն
- Աշխատանքային դաստիարակություն
- Բնապահպանական դաստիարակություն
- Դպրոց-ընտանիք կապը

## ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.Հայրենիքի նկատմամբ սիրո դաստիարակում:
Ճանաչել հայրենի բնաշխարհի պատմական և նշանավոր վայրերը:
Ուսումնասիրել Հայաստանի պատմությունը,լավ սովորել մայրենի լեզուն:Իմանալ երկրի օրենքներն ու առաջնորդվել դրանցով:

2.Ուսման նկատմամբ գիտակցական վերաբերմունքի դաստիարակում ու մտավոր աշխատանքի կուլտուրայի բարձրացում:1-ին դասարանից աշակերտի մոտ դաստիարակել աշխատասիրություն,կարգապահություն:

3.Աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի դաստիարակում,խնայողական վերաբերմունք հասարակական սեփականության նկատմամբ և հասարակության բարօրության համար աշխատելու ունակության մշակում:
«Դպրոցը քո տունն է,նրա սեփականությունը՝ քո սեփականությունը» կարգախոսը պետք է դառնա յուրաքանչյուր աշակերտի համար իրականություն:

4.Զարգացնել հետաքրքրություն և ձգտում գեղարվեստական գործունեության,ընթերցանության,ֆիզկուլտուրայով և սպորտով կանոնավոր պարապելու նկատմամբ:

5. Դպրոցի կանոնադրության ծանոթացում: Աշակերտին ներկայացնել իր իրավունքներն ու պարտականությունները,նրանց մեջ դաստիարակել իրենց իրավունքներից ու պարտականություններից օգտվելու կարողություն:Դաստիարակել կարգապահ աշակերտ:

6.Երեխաներին ուսուցանել արտակարգ իրավիճակներում իրենց պահելու և մյուսներին օգնելու հմտություն,սովորեցնել օգտագործել պաշտպանության անհատական միջոցներ:

7.Դպրոցում ձևավորել այնպիսի կրթական միջավայր,որտեղ աշակերտների միջև առկա տարբերությունները կբացառվի նրանց փոխադարձ հարգանքի միջոցովև դրանք պետք է արտահայտվեն ու ընդունվեն բնականոն ձևով:

8. Աշակերտական խորհրդի /ԱԽ/ ու ծնողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ դպրոցում ստեղծել հաճելի միջավայր,բարեկարգել ու կանաչապատել դպրոցն ու նրա շրջակայքը,խնամել ստեղծված կանաչ տարածքը,կազմակերպել միջոցառումներ,ինտելեկտուալ և սպորտային խաղեր:

ԱԽ-ի հանձնախմբերի միջոցով աշխուժացնել դպրոցի առօրյան:

9.Միջոցառումները պլանավորելիս հաշվի առնել աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:Առաջնային տեղ հատկացնել դպրոցի ավանդական միջոցառումներին:Միջոցառումը նվիրել Հայաստանի ու Արցախի անկախության հոբելյանական 2 -րդ տարեդարձին:

10. Դասղեկական աշխատանքները հետաքրքիր կազմակերպելու համար օգտվել դասղեկի ձեռնարկից,«Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի» ձեռնարկից,«Կյանքի հմտությունները» ինտեգրված ձեռնարկից:

11. <u>«Ընտանիք-դպրոց» համագործակցության կազմակերպում:</u>

Ուստարվա սկզբին՝ 15-օրյա ժամկետում կազմակերպել ծնողական ժողովներ,ընտրել ծնողխորհուրդ:Ծնողների համար շաբաթվա մեջ նշանակել բաց դռների օրեր:

12. Հատուկ ուշադրություն դարձնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների նկատմամբ և համագործակցել հոգեբանի,սոցմանկավարժի,հատուկ մանկավարժի,լոգոպեդի և բազմամասնագիտական թիմի մյուս անդամների հետ:

13. Դասասենյակի ձևավորում՝

ա) կանաչ անկյուն
բ) տեղեկատվական անկյուն
գ) սիմվոլիկայի անկյուն
դ) պատվո անկյուն:

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| հ. | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանա-տու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Երեխաների մոտ ձևավորել մարդասիրական աշխարհայացք, սեփական իրավունքների գիտակցում, բարոյական դիրքորոշումներ: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 2. | Աշխատել ուշադրության արժանացնել կամավորության, համագործակցության, հանդուրժողականության ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողության, բանավիճելու հմտության դաստիարակչական ուղղությունները: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 3. | Համագործակցել իրավապահ մարմինների հետ: Կազմակերպել հանդիպումներ ՆԳ աշխատակիցների հետ: | ընթացքում | ՄԿԱ | |
| 4. | Կազմակերպել մրցույթներ իրավական թեմաներով: | ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 5. | Անցկացնել բանավեճ «Ես ունեմ իրավունք» թեմայով: | մարտ | ՄԿԱ | |
| 6. | Ծնող-դպրոց | ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 7. | համագործակցության ապահովում: Կրթությունից խուսափող անչափահասների հարցերով համագործակցել շահագրգիռ կազմակերպությունների հետ: | ընթացքում | ՄԿԱ<br>ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 8. | Երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքների և պարտականությունների հետ: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1.Բարձր դասարանի աշակերտներին բացատրել մարդկային բարոյական ու հոգևոր արժեքները,արժևորել պատմական անցյալի և ապագայի դերը աշակերտների բարոյական հատկանիշների ձևավորման գործում: | սեպտեմբեր | ՄԿԱ ,դասղեկներ | |
| 2.Բացատրել անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթացը, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար. | ուստարվա ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 2.Աշակերտների մոտ առաջացնել հետաքրքրություն իրենց անձի նկատմամբ, և կատարելագործման ցանկություն: | ուստարվա ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 3.Զարգացնել աշակերտների կամային հատկանիշները, ձևավորել սեփական անձի թույլ կողմերի նկատմամբ քննադատական մտածողություն: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 4.Կազմակերպել էքսկուրսիաներ և ծանոթացնել աշակերտներին ազգային ավանդույթներին, հոգևոր արժեքներին: Քաղաքացիական, հայրենասիրական, հումանիստական գաղափարներ սերմանել նրանց մեջ: | ուստարվա ընթացքում | ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| հ. | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանա-տու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | Համագործակցել դպրոցի բուժքրոջ հետ՝ աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակը ուսումնասիրելու նպատակով: | յուրաք. ամիս | ՄԿԱ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 2. | Սովորեցնել ՝ ի՞նչ է առողջ ապրելակերպը, երեխաների մոտ ճիշտ վերաբերմունք ձևավորել ֆիզկուլտուրայի դասերի և սպորտի նկատմամբ: | ուստարվա ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | |
| 3. | Ուսումնական գործընթացում ուսումնասիրել աշակերտների ծանրաբեռնվածությունը | ընթացքում | ՄԿԱ | |
| 4. | Անցկացնել զրույցներ սանիտարահի-գիենիկ պահանջների, անձնական հիգիենայի վերաբերյալ, աշակերտներին բացատրել ալկոհոլի նիկոտինի, թմրանյութերի, ՁԻԱՀ-ի հետևանքները մարդու օրգանիզմի վրա: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 5. | Համագործակցել արտադպրոցական հաստատությունների հետ՝ մանկա - կան հիվանդությունների կանխարգել ման նպատակով: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 6. | Կազմակերպել մրցույթներ, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ: | ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ Ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | |
| 7. | Մաքուր պահել շրջապատը,դպրոցը, քաղաքը: | ուստարվա ընթացքում | ԴԱՍՎԱՐՆԵՐ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |

## ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1.Գիտելիքի օր<br><br>2Անցկացնել նոր ուսումնական տարվա առաջին աշակերտական ընդհանուր ժողովը, որի ընթացքում ընտրել դպրոցի աշակերտական խորհրդի և դասարանական ինքնավարության մարմինների ընտրություններ կազմակերպող, նախաձեռնող խումբ 8-9-րդ դասարաններում:<br><br>Ախ ընտրություն | սեպտեմբերի 1<br><br>սեպտեմբեր<br><br>սեպտեմբեր | ՄԿԱ- տեղակալ<br><br>ՄԿԱ- տեղակալ դասղեկներ<br><br>տնօրեն<br>ՄԿԱ | |
| 2.Անցկացնել դասարանական ընդհանուր ժողովներ և ընտրել դասարանային խորհուրդներ: | սեպտեմբեր | ՄԿԱ<br>Դասվարներ, դասղեկներ | |
| 3. 8-9-րդ դասարանների ներկայացուցիչներից փակ գաղտնի քվեարկությամբ ընտրել աշակերտական խորհուրդ: Ընտրել աշակերտական խորհրդի նախագահ: | ՍԵՊՏԵՄԲԵՐ | ՄԿԱ- տեղակալ, ԴԱԿ | |
| 4. Հաստատել աշակերտական խորհրդի 2022-2023 ուստարվա պլանը: | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Կազմակերպիչներ | |
| 5. Օգնել աշակերտական խորհրդին ուսումնադաստիարակչական, սոցիալական, մշակութային, տեղեկատվական հանձնախմբեր ստեղծելու, նրանց գործունեությունը կազմակերպելու ուղղությամբ: | | Կազմակերպիչներ | |
| 6.Լսել հաշվետվություններ հանձնախմբերի կատարած | | Կազմակերպիչներ | |

| | | | |
|---|---|---|---|
| օգնել տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ: | | | |

## ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Պատասխանատուներ | Նշումներ |
|---|---|---|---|
| 1.Անցկացնել մեթոդական սեմինարներ՝ նվիրված դասղեկների գործունեությանը և դասղեկների աշխատանքի կազմակերպմանը: | սեպտեմբեր | ՄԿԱ- տեղակալ | |
| Անցկացնել դասղեկների հետ սեմինար-խորհրդակցություն՝ նվիրված դասղեկների պարտականություններին և նրանց փաստաթղթերի կազմակերպմանը: Կազմել դասղեկի ժամերի կարգացուցակ և անցկացնել դասալսումներ: | սեպտեմբերի -ի | Դասղեկներ | |
| Անցկացնել դասվար-դասղեկների սեմինար-խորհրդակցություններ նվիրված սովորողների դաստիարակության ուղղություններին:<br><br>Դասղեկներին ներկայացնել դասղեկի ժամերի գրաֆիկը | ամեն ամիս<br><br>սեպտեմբերի առաջին շաբաթ | ՄԿԱ- տեղակալ<br><br>ՄԿԱ տեղակալ | |
| Կազմակերպել դասվարների աշխատանքի ուսումնասիրություններ: | 2 ամիսը 1 անգամ | ՄԿԱ- տեղակալ | |
| Կազմակերպել դասղեկների աշխատանքների ուսումնասիրություններ և նպաստել լավագույնների աշխատանքների փորձի տարածմանը: | 2 ամիսը 1 անգամ | ՄԿԱ- տեղակալ | |
| Ուսումնասիրել և բացահայտել դասղեկների աշխատանքում տեղ գտած թերություններն ու գործնական օգնություն ցույց տալ նրանց: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ- տեղակալ | |
| Դասղեկների սեմինար- | ուստարվա | ՄԿԱ- տեղակալ | |

| | | | |
|---|---|---|---|
| լսել հաշվետվություններ դասղեկների կատարած աշխատանքների վերաբերյալ: | | | |
| Դասղեկական ժամերի թեմատիկայի քննարկում և զեկույցների պատրաստում: | ընթացքում | ՄԿԱ- տեղակալ | |

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 2021-2022 ուստարվա սկիզբը ազդարhttp://biblio.chgpu.edu.ru/covet/vstavka_Word.htm<br><br>արող << Գիտելիքի և դպրության օր>> առաջին դասարանցիների ընդունելության հանդիսավոր արարողություն: | սեպտեմբերի | Տնօրեն,դասվարներ, կազմակերպիչներ, ՄԿԱ | |
| Կազմակերպել <<Անկախությունը մենք ենք>> խորագրով միջոցառում:<br><br>Հիշատակի օր 44-օրյա պատերազմ<br><br>Ռազնախաղեր | սեպտեմբերի<br><br>սեպտեմբերի 27<br><br>սեպտեմբեր | Դասղեկներ<br><br>Տնօրեն,տեղակալներ, դասղեկներ,դասվարներ<br><br>զինղեկ,ֆիզղեկ | |
| Դպրոցի շենքն ու գույքը պահպանելու նպատակով զր[2]ույցներ անցկացնել աշակերտների հետ << Դպրոցը մեր տունն է, այստեղ մենք տանն ենք>> թեմայով: | տարվա ընթացքում | Դասղեկներ | |

---

[2] http://biblio.chgpu.edu.ru/covet/vstavka_Word.htm

| | | | |
|---|---|---|---|
| Կազմակերպել << Վերածնված Հայաստան>> խորագրով նկարչության մրցույթ: | հոկտեմբերին | Դասղեկներ, գրադարանավար | |
| Ապահովել դպրոցի երեխաների մասնակցությունը համայնքի կողմից կազմակերպվող սպորտային միջոցառումներին և մշակութային կյանքին նվիրված միջոցառումներին: | հոկտեմբերին | Կերպարվեստի ուսուցիչ | |
| Գրքի նկատմամբ սեր արթնացնելու նպատակով անցկացնել զրույցներ << Գիրքը հավատարիմ ընկեր>> թեմայով:<br><br>Թարգմանչաց տոն/ Ուսուցչի տոն | Հոկտեմբեր<br><br>հոկտեմբեր | Դասղեկներ, դասվարներ<br><br>գրադարանավար, ՄԿԱ'դասղեկներ | |
| Կազմակերպել հանդիպումներ իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ: | տարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱ | |

| | | | |
|---|---|---|---|
| 18. Կազմակերպել գրական-երաժշտական ցերեկույթներ ՝ նվիրված կանանց միջազգային տոնին և մայրության ու գեղեցկության օրվան: | Մարտ / ապրիլ | դասղեկներ | |
| 19. Կազմակերպել ֆուտբոլի,վոլեյբոլի միջդասարանական սպորտլանդիաներ: | Տարվա ընթացքում | դասղեկներ | |
| 20. Կազմակերպել 9-րդ դասարանցիների վերջին դասի հանդիսավոր արարողությունը: | մայիս | ՄԿԱ ,դասղեկ | |

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1 | 6-ից 14 տարեկան երեխաների հաշվառում անցկացնելու նպատակով ուսուցիչներին կցել դպրոցին հարող տարածքի շենքերին: | օգոստոսի 12-ից 23-ը | դասղեկներ դասվարներ | |
| 2 | Աշխատանք տանել պարտադիր ուսուցումից դուրս մնացած պատանիների ու աղջիկներին դպրոց վերադարձնելու ուղղությամբ; | ուստարվա ընթացքում | ՄԿԱ,տնօրեն,դասղեկներ | |
| 3 | Խիստ վերահսկողություն սահմանել ուշացումների ու անհարգելի բացակայությունների նկատմամբ: | ուստարվա ընթացքում | ՄԿԱ տնօրեն | |
| 4 | Պարտադիր ուսուցման իրականացմանը մասնակից դարձնել դպրոցի ծնողական համայնքին և ծնողական խորհրդին: | մշտապես | տնօրինություն | |
| 5 | Ուշադրության կենտրոնում պահել անհատական աշխատանք պահանջող աշակերտներին, բացատրական զրույցներ անցկացնել վարքի շեղում ունեցող երեխաների հետ: | ուստարվա ընթացքում | դասղեկներ | |

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1.9-րդ դասարանում զրույցներ անցկացնել տարբեր մասնագիտությունների վերաբերյալ և օգնել երեխաներին ճիշտ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում: | պարբերաբար | ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 2.9-րդ դասարանում գրել շարադրություններ և ամփոփել« Ի՞նչ մասնագիտություն եմ սիրում և ի՞նչ կցանկանայի դառնալ» թեմայով: | տարվա ընթացքում | Հ լեզու գրակ.մ/մ | |
| 3. Կազմակերպել հանդիպումներ տարբեր ԲՈՒՀ-երի և այլ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ: | տարվա ընթացքում | ՄԿԱ | |
| 4. Սովորողներին տեղյակ պահել տարբեր ուսումնական հաստատությունների վերաբերյալ դպրոց ներկայացվող ընդունելության հայտագրերի մասին: | տարվա ընթացքում | Տնօրեն,ՄԿԱ | |

# ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1. Գրադարանի հետ համատեղ անցկացնել գրքի պրոպագանդա, սովորողների արտադասարանական ընթերցանություն, կազմակերպել հանդիպումներ գրողների,հանրապետության անվանի մարդկանց հետ: | տարվա ընթացքում | ՄԿԱ,դասղեկներ, գրադարանավար | |
| 2. Ճշտել պահանջվող դասագրքերի քանակը և ըստ դասարանների հայտ ներկայացնել: | օգոստոս | գրադարանավար ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 3. Կազմակերպել նոր դասագրքերի բաշխումը ըստ դասարանների: | օգոստոս | գրադարանավար ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 4. Հետևել դասագրքերի պահպանմանը , ճշտել գրադարանին պարտք ունեցող աշակերտների ցուցակը և միջոցներ ձեռնարկել կարճ ժամանակում գրքերը վերադարձնելու գրադարան: | տարվա ընթացքում | ԴԱՍՂԵԿՆԵՐ ԴԱՍՎԱՐՆԵՐ | |
| 5. Գրադարանը հայերեն լեզվով գրքերով համալրելու ուղղությամբ բացատրական աշխատանք տանել սովորողների շրջանում: | ընթացքում | գրադարանավար | |

## ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | Ամրապնդել կապը շրջանի մշակութային հաստատությունների միջև | մշտապես | ՄԿԱ | |
| 2. | Ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը համայնքի | տարվա ընթացքում | | |
| . | գրադարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին | տարվա ընթացքում | դասղեկներ | |
| . | | | | |

## ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 2021-2022 ուստարվա սկիզբը ազդարարող << Գիտելիքի և դպրության օր>> առաջին դասարանցիների ընդունելության հանդիսավոր արարողություն: | սեպտեմբերի | Տնօրեն,դասվարներ, կազմակերպիչներ, ՄԿԱ | |
| Կազմակերպել <<Անկախությունը մենք ենք>> խորագրով միջոցառում: | սեպտեմբերի | Դասղեկներ | |
| Դպրոցի շենքն ու գույքը պահպանելու նպատակով զրույցներ անցկացնել աշակերտների հետ << Դպրոցը մեր տունն է, այստեղ մենք տանն ենք>> թեմայով: | տարվա ընթացքում | Դասղեկներ | |
| Կազմակերպել << Վերածնված Հայաստան>> խորագրով նկարչության մրցույթ: | հոկտեմբերին | Դասղեկներ, գրադարանավար | |
| Ապահովել դպրոցի երեխաների մասնակցությունը համայնքի կողմից կազմակերպվող սպորտային միջոցառումներին և մշակութային կյանքին նվիրված միջոցառումներին: | հոկտեմբերին | Կերպարվեստի ուսուցիչ | |
| Գրքի նկատմամբ սեր արթնացնելու նպատակով, անցկացնել զրույցներ << Գիրքը հավատարիմ ընկեր>> թեմայով: | Հոկտեմբեր | Դասղեկներ, դասվարներ | |
| Կազմակերպել հանդիպումներ իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ: | տարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱ | |

# ԴՊՐՈՑԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ:

| Հ. | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | Աշխատանք կատարել սովորողների վարքի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հետևել ուշացումներին, ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ գծով տեղ. Կազմակերպիչներ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 2. | Հետևել հակահամաճարակային կանոնների պահպանմանը: | | | |
| 3. | Կազմակերպել [illegible] միջոցառումներ նվիրված տոնական և հիշարժան օրերին: | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ Կազմակերպիչներ | |
| 4. | Կազմակերպել բնապահպանական միջոցառումներ, աշակերտներին մասնակից դարձնել դպրոցական տարածքի կազմակերպման, բարեկարգման աշխատանքներին: | Ուստարվա Ընթացքում | ՄԿԱ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| 5. | Անհատական աշխատանքներ կազմակերպել շնորհալի, ստեղծագործող աշակերտների հետ մասնակից դարձնելով ներդպրոցական և արտադպրոցական առցանց միջոցառումներին: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |
| | Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ ձեռնակել սոցիալապես անապահով երեխաններին օգնություն ցուցաբերելու համար: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ Կազմակերպիչներ ԴԱՍՂԵԿՆԵՐ | |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Նշումներ |
|---|---|---|---|
| 1.Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել խորհրդի անդամներ և նախագահներ: | Սեպտեմբերի | Դասղեկներ | |
| 2.Հրավիրելընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծմա ենթակա հարցեր: | Սեպտեմբերի | Տնօրեն ,ՄԿԱ | |
| 3.Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ, նրա բոլոր անդամներն ծանոթացնել խորհրդի կանոնադրությանը:Պլանավորել և կոորդինացնել ծնողական խորհրդի գործունեությունը: | Տարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱ | |
| 4.Ծնողական խորհրդի հետ համատեղ կազմակերպել սովորողների կենցաղային պայմանների ուսումնասիրություններ, հետևել սովորողների արտաքին տեսքին և անձնական հիգիենային: | Սեպտեմբեր | Դասղեկներ | |
| 5.Դասարաններ ծնողական խորհուրդների հետ համատեղ ճշտել սոցիալապես ապահով, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, բազմանդամ ընտանիքների երեխաների ցուցակները և համապատասխան աշխատանք տանել նրանց օգնելու ուղղությամբ: | Տարվա ընթացքում | ՄԿԱ | |
| 6. Ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը բազմաբնույթ առցանց միջոցառումներին: | Տարվա ընթացքում | Տնօրեն, ՄԿԱ | |
| 7. Նպատակային օգտագործել ծնողական համայնքի ուժերը սովորողների հիմնական պարտադիր կրթության իրականացման ուղղությամբ: | Տարվա ընթացքում | Դասղեկներ | |